

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/5PSD PL 75-12-01	Էջ 1/5
ԱՌԵՎՏՐԻ/ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ POS ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է՝ 03.12.2020թ-ից	

- 1.1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) POS տերմինալների և Հաշվիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ՝ ՀԴՄ) տրամադրման միջոցով POS ծառայության տրամադրման և սպասարկման պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են POS տերմինալների և ՀԴՄ-ների միջոցով POS ծառայությունից օգտվող առևտրի/սպասարկման կետ(եր)ի /այսուհետ՝ «Առևտրի կետ» կամ «Սպասարկման կետ»/ (Բանկը և Առևտրի կետը միասին՝ Կողմեր) և Բանկի՝ որպես POS տերմինալի և ՀԴՄ-ի միջոցով ծառայություն(այսուհետ՝ POS ծառայություն) մատուցողի փոխհարաբերությունների պայմանները:
- 1.2. Բանկը Առևտրի կետին մատուցում է POS ծառայություն՝ Բանկի սահմանված ձևանմուշով Առևտրի կետի Բանկ ներկայացրած հայտ-պայմանագրի (այսուհետ՝ Հայտ-պայմանագիր) և դրանում նշված պայմանների հիման վրա, որով Առևտրի կետը ընդունվում և հաստատում է Պայմանների ընդունումը (ակցեպտավորումը):
- 1.3. Առևտրի կետը պարտավոր է Բանկի հետ համաձայնեցված, սահմանել POS տերմինալ (ներ)ի, իսկ այլ սարքավորման /հետագայում՝ Սարքավորում/ տեղադրելու անհրաժեշտության դեպքում նաև այդ սարքավորման, տեղադրման վայրը և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ապահովել Բանկի հետ հուսալի կապը քարտերով անկանխիկ վճարումների հավաստագրման համար:
- 1.4. Առևտրի կետը քարտերի սպասարկումը իրականացնում է միայն Բանկի՝ «Առևտրի ու սպասարկման կետերում քարտերի սպասարկման» ուղեցույցի դրույթներին համաձայն: Ուղեցույցը Առևտրի կետին տրամադրվում է POS տերմինալի տեղադրման կամ Ընկերության ՀԴՄ-ն ակտիվացնելու պահին:
- 1.5. Առևտրի կետը պարտավոր է պահպանել քարտերով կատարված գործարքների անդորրագրերի (սլիպ) պատճենները 1 /մեկ/ տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման օրվանից՝ պահպանելով դրանց ամբողջականությունը, և տրամադրում է դրանք Բանկին առաջին իսկ պահանջով 3 (երեք) բանկային օրվա ընթացքում՝ սկսած Բանկից ստացված հարցման օրվանից:
- 1.6. Բանկի և քարտապանի այն առևտրային գաղտնիքը, որը հասու է դարձել Առևտրի կետին Հայտ-պայմանագրի կատարման ընթացքում, ենթակա է պահպանման և չբացահայտման Առևտրի կետի կողմից:
- 1.7. Առևտրի կետը իրավասու չէ ձևափոխել և տրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված սարքավորումը, համակարգչային ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը և այլ նյութերը:
- 1.8. Քարտերի սպասարկումը իրականացվում է միայն ուսուցում անցած աշխատակիցների կողմից:


	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/5PSD PL 75-12-01	Էջ 2/5
ԱՌԵՎՏՐԻ/ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ POS ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է՝ 03.12.2020թ-ից	

- 1.9. Առևտրի կետը ապահովում է Բանկից ստացված Սարքավորման պատշաճ հսկողությունը, չի փոխանցում այն ենթավարձակալության, թույլ չի տալիս այլ անձանց օգտագործել այն:
- 1.10. Բանկի կողմից տրամադրված Սարքավորումը վնասելու և/կամ կորստի դեպքում Առևտրի կետը կրում է դրա նկատմամբ լրիվ գույքային պատասխանատվություն:
- 1.11. Առևտրի կետը Բանկի սեփականությունը հանդիսացող Սարքավորման կամ այլ ցանկացած Սարքավորման խափանման դեպքերում անմիջապես տեղեկացնում է Բանկին այդ մասին և անմիջապես դադարեցնում է Սարքավորման աշխատանքը, ինչպես նաև կասեցնում է քարտերի սպասարկման գործընթացը մինչև Բանկի կողմից լրացուցիչ հրահանգի ստացումը:
- 1.12. Առևտրի կետի կողմից ապրանքների վաճառքը և ծառայությունների մատուցումը քարտապաններին իրականացվում է առանց լրացուցիչ միջնորդավճարների և գնային պայմանների փոփոխման՝ կանխիկ կամ այլ եղանակով վճարման համար սահմանված պայմաններով և գներով:
- 1.13. Առևտրի կետը իրավասու չէ տրամադրվել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտերով կատարված գործարքը անվավեր ճանաչելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտին՝ միայն անկանխիկ եղանակով:
- 1.14. Քարտով կատարվող գործարքները 2 (երկու) կամ ավելի առանձին գործարքների չեն կարող մասնատվել Առևտրի կետից կողմից:
- 1.15. Առևտրի կետի կողմից չի կարող իրականացվել POS տերմինալից տարբեր այլ սարքով (սարքերով) վճարային քարտի ժապավենի տվյալների ընթերցում: Մինևույն ժամանակ Բանկը կարող է հսկողություն սահմանել սույն կետում նշված պահանջի իրականացման/ապահովման համար:
- 1.16. Առևտրի կետը պարտավոր է Հայտ-պայմանագրի դադարեցման պահից 6 (վեց) ամսվա ընթացքում նախքան Հայտ-պայմանագրի դադարեցնելը ցանկացած Պայման/ներ/ի կետերից որևէ մեկի խախտման հետևանքով Բանկին պատճառված վնասի կամ ֆինանսական կորստի ամբողջ գումարի չափով փոխհատուցել Բանկին:
- 1.17. Առևտրի կետում POS տերմինալով կատարված ամսական շրջանառությունից կախված Բանկի կողմից կարող է կիրառվել սպասարկման սակագին՝ համաձայն Ամերիաբանկ ՓԲԸ Սակագների (գործող տարբերակը տեղադրված է Ամերիաբանկի www.ameriabank.am կայքում):
- 1.18. Բանկի առաջին իսկ պահանջով՝ համապատասխան գրավոր պահանջի ստացման օրվանից 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում Առևտրի կետը վերադարձնում է Բանկի սեփականությունը հանդիսացող Սարքավորումը:
- 1.19. Առևտրի կետը պարտավոր է Հայտ-պայմանագրի «Առևտրի/սպասարկման կետի տվյալներ» բաժնում ներկայացված ցանկացած տեղեկատվության փոփոխության և


	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/5PSD PL 75-12-01	Էջ 3/5
ԱՌԵՎՏՐԻ/ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ POS ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է՝ 03.12.2020թ-ից	

քարտեր սպասարկող նոր աշխատակիցների աշխատանքի ընդունման մասին անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին:

- 1.20. Հայտ-պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների խախտման դեպքում Առևտրի կետը կրում է լրիվ պատասխանատվություն իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընդ որում, Առևտրի կետը փոխհատուցում է նաև քարտապանին պատճառված վնասը՝ պայմանավորված իրեն հայտնի բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակմամբ և այլ պարտավորությունների խախտմամբ, որոնք հանգեցրել են քարտապանին բարոյական կամ նյութական վնասի պատճառմանը:
- 1.21. Առևտրի կետը կրում է ամբողջ ծավալով պատասխանատվություն՝ քարտի համարի ձեռքով մուտքագրման եղանակով կատարված գործարքների համար, եթե գործարքների կատարման նման եղանակ նշված է Հայտ-պայմանագրում:
- 1.22. Առևտրի կետը կարող է պահանջել Բանկից ապահովելու Սարքավորումը շահագործելու համար անհրաժեշտ նյութերը:
- 1.23. Առևտրի կետը կարող է ստանալ Բանկից Առևտրի կետում քարտերով կատարված անկանխիկ վճարումների գումարները, եթե դրանք կատարված են Հայտ-պայմանագրի պահանջներին համապատասխան:
- 1.24. Առևտրի կետը կարող է իրականացնել «Առևտրի/սպասարկման կետերում վճարային քարտերի սպասարկման ուղեցույց»-ով նախատեսված վճարային քարտերով գործառնությունները՝ դրանով սահմանված կարգով:
- 1.25. Առևտրի կետը կարող է պահանջել Բանկից փոխհատուցել Սարքավորում(ներ)ով կատարված քարտային գործարքների գումարները, եթե վերջիններս ստացել են հավաստագրում և բավարարում են Պայմաններին:
- 1.26. Բանկը ապահովում է Առևտրի կետում վճարային քարտերով գործառնությունների իրականացման շուրջօրյա հավաստագրում:
- 1.27. Բանկը ապահովում է Առևտրի կետին քարտերով գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ սարքերով, գովազդային նյութերով և իրականացնում է նշված սարքավորման տեխնիկական սպասարկումը:
- 1.28. Բանկը ապահովում է գանձապահ-օպերատորների ուսուցումը Սարքավորումների հետ աշխատանքին:
- 1.29. Բանկը ապահովում է Պայմանների 1.4 կետի պահանջները բավարարող և հավաստագրում ստացած քարտերով կատարված գործարքների գումարների փոխհատուցումը Առևտրի կետին՝ կիրառելով Բանկի և Առևտրի կետի միջև կնքված Հայտ-Պայմանագրում նշված միջնորդավճարները:
- 1.30. Բանկը պահպանում Հայտ-պայմանագրից և Պայմաններից բխող պարտավորությունների կատարման ընթացքում Բանկին հայտնի դարձած գործառնությունների գաղտնիությունը: Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/5PSD PL 75-12-01	Էջ 4/5
ԱՌԵՎՏՐԻ/ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ POS ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է՝ 03.12.2020թ-ից	

- 1.31. Բանկն կարող է սառեցնել Հայտ-պայմանագրում «Առևտրի/սպասարկման կետի տվյալներ» բաժնում նշված ընկերության/այսուհետ՝ Ընկերություն/ հաշվի միջոցները բողոքարկվող գործառնության գումարի չափով՝ տվյալ տեսակի բողոքարկման պարզաբանման համար Visa/MasterCard, MIR կամ «Արմենիան Քարդ» համակարգերի կանոններով սահմանված ժամանակահատվածով, բայց ոչ ավել քան 6 (վեց) ամսով, եթե Առևտրի կետում քարտով վճարում կատարած անձը բողոքարկում է տվյալ կետում գործարք կատարելու փաստը:
- 1.32. Բանկը կարող է Հայտ-պայմանագրի և/կամ Պայմանների խախտմամբ կատարված գործառնությունների դեպքում անմիջապես դադարեցնել Ընկերությանը տրամադրված POS տերմինալի գործողությունը և պահանջել Ընկերությունից վերադարձնել տերմինալը Բանկին, ինչպես նաև հատուցել Բանկին վերջինիս կողմից այդ առնչությամբ կրած բոլոր վնասները, կորուստներն ու ծախսերը ամբողջ ծավալով:
- 1.33. Բանկը կարող է գանձել Առևտրի կետից քարտերով կատարված գործարքների դիմաց Բանկի և Առևտրի կետի միջև կնքված Հայտ-պայմանագրում նշված միջնորդավճարը ըստ նշված քարտատեսակի:
- 1.34. Բանկը իրավասու է փոփոխել քարտերի սպասարկման դիմաց գանձվող տոկոսադրույքը՝ այդ մասին առնվազն 30 /երեսուն/ օրացուցային օր առաջ գրավոր տեղեկացնելով Առևտրի կետին:
- 1.35. Բանկը կարող է գանձել Առևտրի կետից /Հայտ-պայմանագրում նշված Ընկերության համապատասխան հաշիվներից/ այն գործարքների գումարները, որոնք կատարվել են Պայմաններից որևէ կետի խախտումով, կամ ապօրինաբար գործածվող քարտերով:
- 1.36. Առևտրի կետի կողմից Պայմանների որևէ կետով նախատեսված պարտավորություն/ներ/ը խախտելու դեպքում Բանկը կարող է պահանջել նրանից տուգանք պարտավորությունը խախտելու հետևանքով պատճառված վնասի մինչև 10%-ի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը չի ազատում Առևտրի կետին Բանկին պատճառված վնասները, կրած կորուստներն ու ծախսերը ամբողջությամբ փոխհատուցելու պարտավորությունից: Բանկը կարող է Պայմանների 1.36 կետի շրջանակներում Բանկի նկատմամբ առաջացած դրամական պարտավորություններն անակցեպտ կարգով գանձելու՝ Բանկում Ընկերության սպասարկվող դրամային և անհրաժեշտության դեպքում նաև արտարժույթային հաշիվներից:
- 1.37. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում՝
- 1.37.1. Պայմանների 1.1 – 1.15 կետերից որևէ մեկի խախտումով կատարված գործարքների համար:
- 1.37.2. Բանկը ապօրինաբար գործածվող քարտերով կամ քարտային տվյալներով կատարված գործարքների համար:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/5PSD PL 75-12-01	Էջ 5/5
ԱՌԵՎՏՐԻ/ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ POS ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 3	
		Ուժի մեջ է՝ 03.12.2020թ-ից	

1.37.3. Կապի միջոցների անսարքության պատճառով վճարումների սպասարկման անհնարինության համար:

2.1. Սպասարկման կետերին ՀԴՄ-ների տրամադրման պայմաններն են.

2.1.1. ՀԴՄ սարքերը տրամադրվելու են 5 տարի պարտավորության սկզբունքով՝ Պայմանագրի գործողության ընթացքում ամսական ոչ պակաս, քան 500,000 ՀՀ դրամ շրջանառություն ապահովելու պարտավորություն ստանձնող կետերին:

2.1.2. Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Սպասարկման կետը օգտվելու է միայն Բանկի կողմից տրամադրվող POS ծառայությունից:

2.1.3. Գործընկերոջ կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վերջինս պարտավորվում է վերադարձնել ՀԴՄ սարքը և վճարել հրաժարագին՝ 100,000 ՀՀ դրամ գումարի չափով:

2.1.4. Գործընկերոջ կողմից 3 ամիս անընդմեջ Սպասարկման կետում ՀԴՄ սարքով իրականացված անկանխիկ գործարքների ամսական առնվազն 500,000 ՀՀ դրամ գումարի չափով շրջանառություն չապահովելու պարագայում, ինչպես նաև սահմանված պահանջներից որևէ մեկը չպահպանելու պարագայում Բանկն իրավունք ունի վաղաժամկետ լուծել պայմանագիրը և հետ վերցնել ՀԴՄ սարքը: